

ԳԻՒՂԱՑՆՑԵՍՈՒԹԵՍՆ ԳԻՑԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շատերը՝ տեսնելով որ տգէտ գիւղացին հերկում է, ցանում, հսձում, տնային կենդանիներ պահում և այլն, եզրակացը նում են, որ գիւղատնտեսութեամբ զբաղուելու համար առանձին մասնագիտական պատրաստութիւն չի հարկաւոր: Մինչդեռ բաւական է նոյնիսկ մակերևոյթային հայեացք զցել գիւղատնտեսի գործունէութեան վրայ՝ տեսնելու համար, թէ ինչ բարդ և բազմազան երևոյթների հետ գործ ունի նա:

Գիւղատնտեսի գործունէութեան նպատակն է որբան կարելի է շատ, ընտիր և պիտանի բոյսեր և կենդանիներ աճեցընել մարդկային կարիքների համար: Այդ նպատակին աջող կերպով հասնելու համար անհրաժեշտ է իմանալ պիտանի բոյսերի և կենդանիների տեսակները, նրանց մարմնի կազմութիւնը, նրանց կեանքի օրէնքները, վերնահողի, կլիմայի զանազանակերպ ազդեցութիւնները, ճանաչել օգտակար բոյսերի և կենդանիների թշնամիներին, միջոցներ գտնել կուելու դրանց դէմ և այլն: Այդ գեռ բաւական չէ. հարցը բարդանում է, երբ գիւղատնտեսութեան վրայ նայում ենք ինչպէս արդիւնաբերութեան վրայ: Երբէ տնտեսութիւն նա կախում ունի համաշխարհային շուկայից, ենթարկուած է տնտեսական կեանքի ելևէջներին և փոփոխութիւններին: Հետևաբար գիւղատնտեսը պէտք է միաժամանակ լինի և պոլիտիկօէկոնոմ (քաղաքատընտես): Այժմ կապիտալի գերիշխանութեան դարում լոկ մարդկային ջուխտ ձեռքը և հնադարեան գործիքները անկարող են մրցել եւ լիկտրականութեան և շոգու ոյժով բանող օրէցօր կատարելագործուող մեքենաների հետ: Պէտք է գիւղատնտեսը հետևի և տեխնիկական կատարելագործութիւններին:

Վերև ուրուագծած պատկերից պարզ է, թէ որքան բազմակողմանի և ընդարձակ գիտական տեղեկութիւններ պէտք է ունենայ իսկական գիւղատնտեսը: Պապերից ժառանգած կամ անձնական փորձերով խարխսափելով վերև յիշած գիւղատնտեսական երևոյթների մէջ արդիւնաւոր բան չի կարելի կատարել:

Միւս կողմից զանազան գիտութիւնների տուած տեղեկութիւններն անհրաժեշտ լինելով հանդերձ միայն օժանդակող դեր կարող են կատարել, որովհետև գիւղատնտեսութիւնը ինքը ևս ունի առանձնակի յատուկ խնդիրներ, որ և կազմում են բուն գիւղատնտեսական գիտութեան դիսցիպլինան:

Գիւղատնտեսութեան, իբրև գիտութեան, հայր է ճանաչում Ալբրեխտ Թէրը (Thaer), որ ծնուել է Գերմանիայում XVIII դարի վերջում: Թէրի գրած «Ներացի» (rational) գիւղատնտեսութեան հիմունքները՝ (Gründsetze d. rationalen Landwirtschaft) աշխատութիւնը լոյս տեսաւ 1810 թւականին: Այդ գրքում Թէրը բոյսերի կերակրուելու մասին, ըստ այժմեան մեր հասկացողութեան, յայտնում է տարօրինակ միտք: Բայց այն ժամանակուայ համար, երբ այդ հարցի մասին չունէին ոչ մի տեղեկութիւն, երբ բոյսերի կերակրուելը կազմում էր լեռա inceognita, Թէրի յայտնած միտքն էլ ուշագրաւ նորութիւն էր: Նրա կարծիքով բոյսերը կերակրուում են հումուառվ, այսինքն մեռած բոյսերի փթած մասերով: Այս միտքը գտաւ իր հետևողներին և պահպանում էր մինչև 1840 թ., երբ գերմանացի յայտնի քիմիկոս Լիբիխը լոյս ընծայեց իր «Die organische Chemie in ihrer Anwendung auf Agricultur und Phisiologie» (Օրգանական քիմիան և նրա գործադրութիւնը գիւղատնտեսութեան և ֆիզիուգիայի մէջ) գիրքը: Լիբիխը իբրև քիմիկոս, հակառակ Թէրին, իր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց հանքային նիւթերի վրայ: Նրա հետազոտութիւնների հիմնական կէտը այս էր. «Ածխաթթուն, աւշակը (ամառակ), ջուրը, լուսածնական (ֆօսֆօրնայ) ծծմբախառն (սերհայ) թթուներ, կիր, դառնահող (մագնեզիա), կալի, երկաթ, մի քանիսների համար և աղ (nace)—ահա նիւթեր, որոնցով պարում են բոյսերը»: Լիբիխի այս մոռերը մեծ աղմուկ բարձրացրին: Չնայած խօսելու և համոզելու մեծ ընդունակութիւններին, նրան բաւական ժամանակ հարցաւոր եղաւ իր մտքերը տարածելու համար: Թէրի թէորիան այնպէս խոր արժանի էր գցել գիւղատնտեսների ուղեղների մէջ, որ նրանք լսել անզամ չէին ուղում բոյսերի կերակրուելու հարցի մի որեւէ ուրիշ լուծման մասին: Բայց Լիբիխը չէր յուսահատում, նա շարունակում էր իր կրակոս ճառերում և յօդուածներում պախարակել այն ժամանակուայ հողագործութեան յափշտակողական ձևի դէմ: Բերում էր պատմութիւնից Հռոմի և Յունաստանի անկման օրինակները, որոնք ցոյց էին տալիս, նրա կարծիքով, գիւղատնտեսութեան այդկերպ տանելու հետևանքները: Նա պահանջում էր հողին անպայման վերադարձնել այն բոլորը, ինչ որ

վերցնում է նրանից բոյսը: Եթէ այդպէս վարուել, ասում էր նա, այն ժամանակ կարելի է հողի արդինաբերութիւնը յաւիտենական համարել և նրա բերքը բարձրացնել մարդկութեան պահանջների համեմատ: Լիբիխի այս մտքերը գիւղատնտեսութեան համար ունեցան առաջնակարգ նշանակութիւն: Այդ ժամանակուանից սկսուեց բոյսերի մննդառութեան ուսումնասիրութիւնը, և պարարտացման նիւթերի գործածութիւնը ահազին զարկ ստացաւ: Միայն Գերմանիայում այդ նիւթերի գործածութիւնն այժմ համում է տարեկան 80 միլիոն բուրլու Լիբիխը ցոյց տուեց, որ բոյսի համար բոլոր նիւթերը միակերպ անհրաժեշտ են, և որ նրա աճումը և բերքի քանակը որոշում է այն նիւթով, որը հողում գտնուում է ամենաքիչ քանակութեամբ:

Լիբիխն էր առաջինը, որ ըմբռնեց այն ճշմարտութիւնը, թէ աշխարհիս երեսին ապրող բոլոր էակները իրանց ոյժը (ενεργία) գլխաւորապէս ստանում են պատրաստ ածխածնական (սցլերօճտօթ) բաղադրութիւններից, ընդունելով այս վերջիններս իրեւ կերակուր, և թէ այն փոքրիկ լարորատորիան, որտեղ շինուում են այդ բաղադրութիւնները հանքային նիւթերից արեգակի ճառագայթների ոյժով, բոյսերի մէջ պարունակուող կանաչ նիւթն է (χλοροֆիլլ): Չնայած նրան, որ Լիբիխի գրքի լոյս տեսնելուց մինչև այժմ անցել է 60 տարուց աւելի, բայց բոյսերի կերակրուելու մասին տեղեկութիւնները ընդհանուր կէտերում մնացել են նոյնը: Նրա յայտնած մտքերը մինչև այժմ էլ ընդունում են փոքր փոփոխութիւններով: Այժմ օրինակ՝ մենք գիտենք, որ Լիբիխը, ինչպէս և Թէրը, չափազանցացնում էին բոյսերի կերակրուելու համար հանքային նիւթերի կամ հումուսի նշանակութիւնը: Այժմ մենք ընդունում ենք, որ ինչպէս հանքային նիւթերը, նոյնպէս և հումուսը անհրաժեշտ են բոյսերին լաւ աճելու համար: Առաջինը ծառայում է բոյսերի համար իրեւ կերակուր, իսկ երկրորդը լաւացնում է հողի Փիզիկական կազմը:

* * *

Դիւղատնտեսութեան մէջ շատ երևոյթներ պարզուեցան և ստացան իրանց բաւարար բացատրութիւնը, երբ զարգացաւ քակտերիօգիկան:

1866 թւականին ուսւա գիտնական Վորոնին լաստենու (օլխա) արմատների ուռոյցքներում գտաւ բակտերիաներ: Ուղղութեան 20 տարի անց մի ուրիշ գիտնական Գելրիգել այդտեսակ

բակտերիաներ գտաւ թիթեռնակերպ (լորի, սիսեռ ևայլն) ընտանիքին պատկանող բոլոր բոյսերի արմատների ուռոյցքների մէջ: Այդպիսով բացատրուեց այն տարօրինակ և անհասկանալի հարցը, թէ ինչու մի քանի բոյսեր բորակածնային նիւթերի կարփ չեն զգում, իսկ միւսները զգում են: Պարզուեց, որ այդ բակտերիաներն ապրելով այդ բոյսերի արմատների վրայ՝ օդի մէջ մեծ քանակութեամբ սփռուած բորակածինը կանում են և նրան դարձնում բոյսերի համար գիւրամարսելի: Մրանով դըրուած էր բակտերիոլոգիական հետազոտութիւնների սկիզբը հողագործութեան մէջ: Այդ հետազոտութիւնները ցոյց տուին ի միշտ այլոց, որ հողը մի մեռած և անշարժ սուբստրատ չէ, այլ որ նրա մէջ եռում է կեանքը բառիս բուն նշանակութեամբ: Պարզուեց, որ հողի մէջ տեղի ունեցող բակտերիոլոգիական գործողութիւնները ունեն հողի պտղաբերութեան և ուրիշ կողմերի համար շատ մեծ նշանակութիւն: Բակտերիաների և սունկերի ուսումնասիրութիւնը ցոյց տուեց զանազան գիւղատնտեսական բերքերի փշանալու իսկական ձևը: Այդ ժամանակուածնից սկիզբը գրուեց մի նոր գիտութեան—բոյսերի ախտաբանութեանը: Այդ գիտութեան շնորհիւ մարդ ոյժ ստացաւ կուել այսպիսի թշնամիների հետ, ինչպէս են միլդիա, օիդիտում, գետնախնձորի փթելը, ցորենի սեանալը ևայլն ևայլն:

Բոյսերի ախտաբանութեան հարազատ բոյրն է գործնական միջատաբանութիւնը: Այս վերջինս ուսումնասիրում է միջատներին և առաջարկում է նրանց դէմ կուելու միջոցներ: Գիւղատնուեսութեան այդ փոքրիկ թշնամիներից մի քանիսը կորցրել են, իսկ ուրիշները պէտք է կորցնեն իրանց ազդեցութիւնը: Այդ փոքրիկ աւերիչների մի քանիսների հետ կուելու համար վերջին ժամանակներս ցոյց են տրուած, բացի զանազան դեղերից, աւելի էական և արժանի միջոցներ, այդ այն է, որ մարդ կարողանայ բազմացնել հէնց դրանց թշնամիներին:

Վերջապէս շնորհիւ այդ փոքրիկ օրգանիզմների (բակտերիաների և սունկերի) ուսումնասիրութեան, գիւղատնտեսութիւն գործունէութեան մէջ մասսամբ ազատուեց զանազան արտաքին պատահարներից: Այժմ՝ օրինակ՝ կամաց-կամաց որոշ տեսակ սունկերի և բակտերիաների մաքուր կուլտուրան սկսում է աչքի ընկնող գեր խաղալ գիննեգործութեան, գարեջուր շինելու, օդի քաշելու և պանրագործութեան մէջ: Առաջներում՝ գինի, գարեջուր, օդի շինելիս գիւղատնտեսը գտնուում էր ամբողջապէս պատահականութեան ձեռքում, և այդ նիւթերի որակն էլ նոյնպէս պատահական էր:

Առասարակ պէտք է ասել, որ գիւղատնտեսական տեխ-

Նիկական արդիւնաբերութիւնը ԽIX դարու երկրորդ կիսում արել է ահազին առաջադիմութիւն։ Այդպէս, ճակնդեղից շաքար շինելը թէկուզ սկսել է անցեալ դարու սկզբում, բայց միայն 70-ական թւականներից սկսած նա կարող է համարուել լուրջ արդիւնաբերութիւն։ Այդ կարճ ժամանակամիջոցում, չնորհիւ արհեստական ընտրողականութեան, ճակնդեղի մէջ պարունակուող շաքարի քանակութիւնը բարձրացրուել է 6% մինչև 20—21%, նոյնպէս աւելացրուել է գիտնակինածորի նաշիկի քանակութիւնը, որից ստացւում է թէ նաշիկ և թէ բաշում է արագ։

Սրանով մենք վերջացնում ենք մեր խօսքը բուսաբանութեան (растениеводство) նկատմամբ արուած առաջադիմութիւնների մասին։ Չուզենալով երկարացնել մեր յօդուածը, մենք բաց ենք թողնում գիւղատնտեսութեան աւելի, այսպէս ասած, փոքր ճիւղերի նկատմամբ արուած առաջադիմութիւնները, ինչպէս են—այգեգործութեան, մեղուապահութեան, շերամապահութեան ևայլն։

Այժմ տեսնենք ինչ է արուած անասնապահութեան մէջ։

Ինչպէս գիւղատնտեսութեան շատ ճիւղերի, նոյնպէս և անասնապահութեան վերաբերեալ առաջին աշխատութիւնը լոյս է տեսել Գերմանիայում։ 1861 թուականին պրոֆ. Կիւհնը (Kühn) հրատարակեց «Die zweikmessigste Ernährung des Rindvieches» (Եղջերաւոր կենդանիներին կերակրելու օգտակար ձևը) աշխատութիւնը։ Դեռ Կիւհնից առաջ այդ հարցով հետաքրքրուել էին թէը և կիրիխը։ Բայց Կիւհնի գիւղը առաջինն էր, որ ամբողջովին նուիրուած էր անասնապահութեան։ Այդ գիւղը հիմնովին փոխեց մինչև այդ կենդանիների կերակրուների մասերի և նրանց մննդարարութեան մասին տարածուած կարծիքները։ Մի կողմից կերակրելու ձեի զարգացումը, միւս կողմից եգիպտացորենի և ճակնդեղի (свекла)՝ անասուններին կերակրելու համար տեսակների մշակութիւնը, երրորդ կողմից 80-ական թւականներում՝ գիւղատնտեսական տեխնիկայի արդիւնաբերութիւններից մնացած աւելորդ բաների (գարեջրի տերտ, ճակնդեղից շաքար պատրաստելու ժամանակ մնացած կեղտը ևայլն) չորացնելու և պահելու մշակուած ձեերը և վերջապէս կենդանիների արդիւնաբերութեան ճիւղերի մասնագիտացումը—այս բոլորը միասին մեծ զարկ տուին առնասարակ անասնապահութեան և մասնաւորապէս կաթնատնտեսութեան զարգացման և դարձրին նրանց օգտակար և ձեռնուու արդիւնաբերութեան ճիւղեր։ ԽIX դարում կենդանիների մասնագիտացումը հասցրուած է իր զարգաթնակէտին։ Փետրուար, 1904.

Այս գործում առաջին տեղն է բռնում Անգլիան, որտեղ, շնորհիւ խելացի արհեստական ընտրողականութեան, ստեղծուած են այնպիսի կուլտուրական ջինսեր, ինչպէս են անգլիական արշաւաձին (Տեատրա), որ չունի իր նմանը ամբողջ աշխարհում, շորտհորն, որ իր մսային և գերանալու ընդունակութեամբ առաջնն է, խոզերի, ոչխարների և կաթնատու կովերի տեսակները, որոնք իրանց արդիւնաբերող ընդունակութիւններով անգերազանցելի են և այլն։ Թէ ինչ չափի կարող են հասնել ընտրողականութեամբ զարգացած ընդունակութիւնները, այդ երեսում է մի փաստից։ Պրոֆ. Կալուգին պատմում է, որ արտասահմանի մի ցուցահադէսում ցոյց էր դրուած մի կով, որ կաթէր տալիս տարեկան 1000 վերոից աւել...

Անսանսպահութեան շատ նպաստեց և կենդանիների հիւանդութիւնների առաջն առնելու ու բժշկելու եղանակների զարգացումը. կարելի է ասել, թէ գիտութիւնը XIX դարում գիւղատնտեսի ձեռից խլեց դանակը և նրա փոխարէն տուեց սրբակիչը (Ապրուց): անսանսպահութեան ահուելի թշնամինները, ինչպէս են—ժանտախտը, սիրիրական ախտը, խոզերի կարմիր քամին և այն, որոնք տարեկան տասնեակ միլիոնների գոհ էին տանում Եւրոպայում,—այժմ կորցրել են իրանց աւելիչ գործունէութիւնը պատուաստման շնորհիւ։ Անցեալ տարի միայն կովկասում ժանտախտի դէմ շիճուկով պատուաստուած են 200,000 գլխից աւելի։ Այդ շիճուկով սրսկուածները համարեա չեն ենթարկում կոտորածի, աւելի ճիշտ՝ նրանց կոտորածի թիւը համում է մինչև 20%, մինչդեռ առանց այդ միջոցի նարարձրանում է 75—80 և աւելի տոկոսի։

Մեր ընդհանուր հայեացքը գիւղատնտեսութեան զարգացման վերաբերեալ լրիւ չէր լինիւ, եթէ չիշէինք XIX դարում ստեղծուած մի գիտական ճիւղի մասին, որի զարգացմամբ մենք պարտական ենք այնպիսի ոռւս գիտնականներին, ինչպիսին էր նորերում վախճանուած Դոկտորակաը, Սիրիրցել և Կոստանդնուպոլիս։ Մեր խօսքը հողագիտութեան (Պօշտովնենի) մասին է։ Հողագիտութեան հետ միասին զարգանում են և՛ հողի ոռոգման ու ցամաքեցնելու ձևերը։

Ոռոգման շնորհիւ հազարաւոր գիւղատնտեսին անապատներ այժմ դառել են այգիների և արտերի հրաշալի կանաչ տարածութիւն։ Ահագին ճահիճների տեղ, որտեղ մամուռից և կցկցուկոց (ԽՅՈՎԸ) զատ ոչինչ չէր բուանում, այժմ գութանն է բարձրացնում շերտեր և սերմերի համար պատրաստում փափուկ և տաք անկողին։

Աւելի պակաս չէ գիւղատնտեսութեան մէջ տեխնիկայի

հսկայական զարգացումը։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ գիւղատնտեսական գործիքները կատարելագործում են ոչ թէ տարիներով, այլ նոյնիսկ շաբաթներով։ Կատարելագործութիւնները սիստեմների մէջ և նոր մեքենաների ստեղծելը անընդհատ հետևում են իրար։ Որպէսզի մարդիկ կարողանան հետևել տեխնիկայի առաջադիմութեան, ծանօթանալ նոր մեքենաների հետ, ամենայն տարի այս կամ այն տեղ կազմում են այդ գործիքների ցուցահանդէսները և մրցութիւններ։ Թէ ինչ ահազին չափով են մուտք գործում գիւղատնտեսական զանազան գործիքներ, մեքենաներ Ռուսաստան, բաւական է յիշել, որ միայն 1903 թ. Նովօրոսսիյսկի վրայով արտասահմանից մտել է 3,936,373 պուդ գիւղատնտեսական մեքենաներ, այսինքն 2,104,010 պուդով աւելի, քան 1902 թ.։

Կալսող մեքենաներ, որոնք մի օրում կալսում և մաքրում են հաղարաւոր պուդ հացահատիկներ, մանգաղի փոխարէն հնձող մեքենաներ, քամող մեքենաներ, շոգիով, նոյնիսկ ելեկտրականութիւնով բանող հսկայ գութաններ, սեպարատոր, ակումուլիսատոր, ցանող մեքենաներ ևայլն ևայլն, արդեօք սըրանք ցոյց չեն տալիս տեխնիկայի զարգացումը։

Վերջացնելով մեր համակօտ տեսութիւնը գիւղատնտեսական գիտութեան զարգացման մասին, պէտք է աւելացընենք, որ գժիշտաբար մինչև այժմ Ռուսաստանում գիւղատնտեսութիւնով պարապող մեծամասնութիւնը չի կարողանում օգտուել գիտութեան և տեխնիկայի բարիքներից։ Խնչու։ Այս հարցն էր դրուած և անցեալ տարի Բարձրագոյն հրամանով «գիւղատնտեսական արդիւնարերութեան կարիքները քննելու համար» հիմնուած առանձին խորհրդակցութեան առաջ։ Այդ խորհրդակցութեան գաւառական կոմիտեները այս հարցը ծանր ու բարակ քննելուց յետոյ եկան այն եղբակացութեան, որ գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացման խանգարում են՝ ժողովուրդի անզարդացողութիւնը և մի շարք ընդհանուր հասարակական աննպաստ պայմաններ։

Ագրոնոմ ԵԲ. ՍԱՐ.